

**NALOXONE-Ը  
ԿԱՐՈՂ Է ՓՐԿԵԼ  
ԿՅԱՆՔ**

**Ինչ պետք է իմանաք  
Naloxone-ի մասին.**

- Այն դեղամիջոց է, որն օգտագործվում է օփիոիդային գերդոզավորման հետևանքները ժամանակավորապես վերացնելու համար:
- Այն վնասակար չէ, եթե տրվում է ափիոնանման նյութերի գերչափաքանակ չօգտագործող կամ ընդհանրապես մեծ չափաքանակ չընդունող անձի:
- Չի փոխազդում դեղերի հետ և չունի մահացու չափաքանակի սահմանափակում:
- Չի կարող առաջացնել գերդոզավորում և Չի առաջացնում կախվածություն:
- Ազդեցությունն անցնում է 30-ից 90 րոպեի ընթացքում, հետևաբար գերդոզավորման վիճակը կարող է վերադառնալ:

Դուք կարող եք ձեռք բերել Naloxone-ն անմիջապես դեղատնից կամ համայնքային կազմակերպություններից:

Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք Ապահով և Ակտիվ Համայնքների Մասնաճյուղ՝ [www.cdph.ca.gov](http://www.cdph.ca.gov):

**Եթե ձեզ, ձեզ  
մտերիմ կամ  
ծանոթ անձին  
անհրաժեշտ է  
բուժում,  
զանգահարեք  
մեզ ցանկացած  
պահի՝ 24/7:**

**ԹՄՐԱՆՅՈՒԹԵՐԻ ԶԱՐԱՇԱՀԱՄԱՆ  
ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՕՈՒՆՈՒԹՅԱՆ ՈՒԾ՝  
1.844.804.7500**

**Բուժումը և  
Ապաքինումը  
Հնարավոր են:**

SAPC | Substance Abuse  
Prevention and Control



COUNTY OF LOS ANGELES  
Public Health

**Դուք կարող  
եք Փրկել  
Կյանք:  
  
ԱՌԱՋԻՆ  
ՕԳՆՈՒԹՅՈՒՆ  
ԳԵՐԴՈՋԱՎՈՐ  
ՄԱՆ  
ԺԱՄԱՆԱԿ**



**դուք  
ԼՉԾՈՂՄՈՒԹՅՈՒՆ  
ՈՉԽՅՈՒՆ ԵՎ Դ  
ՍՐՄԱՍԱԽՈՒԹՅԱՆ ԱԶԵ  
ՈՎՈՒՄԻՆ ԱՎՓԻՂ  
ԼՉՅՈՂՄՈՅ ՈՉԽՅՈՒՆ**

# Անձի հնարավոր գերդոզավորման նշանները

Շնչառության բացակայություն կամ մակերեսային շնչառություն:



Կլկլոց կամ բարձր խոնկոց:



Կպչուն և սառը մաշկ:



Արթնանալու կամ խոսելու անկարողություն:



Գունաթափված մաշկ (հատկապես շուրթեր և եղունգներ)



Փոքրացած բիբեր:



## Ինչ անել՝



Թափահարել և բղավել:




**ԶԱՆԳԱՅԱ ԲԵՆ 911:**



Արձագանքի բացակայության դեպքում naloxone-ի չափաբաժինն ամբողջությամբ ցողել մեկ քթանցքի մեջ:



1-2 րոպե արձագանքի բացակայության դեպքում երկրորդ չափաբաժինն ամբողջությամբ ցողել մյուս քթանցքի մեջ:



Ստուգել շնչառությունը:



Կատարել արհեստական շնչառություն և անձին կողաշրջել (վերականգնման դիրք):



Սպասել անձի հետ մինչև օգնության ժամանումը:

## Արհեստական Շնչառություն



- 1 Անձին պառկեցնել մեջքի վրա:
- 2 Բարձրացնել կզակը՝ շնչուղիները բացելու համար:
- 3 Ստուգել՝ արդյոք բերանի մեջ որևէ բան կա, եթե կա, մաքրել այն:
- 4 Սեղմել քիթը, բերանով հպվել նրա բերանին, երկու անգամ շնչառություն տալ:
- 5 Վայրկյան հետո նորից շնչառություն տալ:
- 6 Յուրաքանչյուր 5 վայրկյանը մեկ շնչառություն տալ:

## Վերականգնման Դիրք



- 1 Անձին կողաշրջել:
- 2 Գլուխը պետք է մի փոքր հետ լինի, որպեսզի շնչուղիները բացվեն:



- 3 Ձեռքով պահեք գլուխը:
- 4 Ծնկով պահեք այնպես, որ մարմինը չըջվի որովայնի վրա: